

ՍԵՂԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ
ԱՆԱԴԻՏ ԳԱԼՍՏՅԱՆ

ՖՐԱՆՍԵՐԵՆԻՑ ԱՆԳԼԵՐԵՆ ՆԵՐԹԱՓԱՆՑԱԾ
ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՎԱԲԱՆԱԿԱՆ
ՅՈՒՐԱՅՄԱՆ ԽՆԴԻՐԸ
(XVII-XVIII ԴԴ. ՆՅՈՒԹԻ ԴԻՄԱՆ ՎՐԱ)

Անգլերենի պատմական զարգացմանն առնչվող խնդիրների շարքում կարևոր տեղ է զբաղեցնում փոխառությունների յուրացման հարցը: Բառափոխառությունների թափանցումը մի լեզվից մյուսը իր քանակական ու որակական ամբողջության մեջ, ըստ էության, ներկայացնում է միջազգային բազմակողմ ու բազմաբնույթ հարաբերությունների անդրադարձը: Սուտք գործելով փոխառու լեզու՝ փոխատու լեզվի տարրերը (մեր դեպքում՝ բառափոխառությունները) անցնում են յուրացման երկարատև պրոցես, որն ընթանում է մի քանի հիմնական փուլերով՝ հնչյունագրային, քերականական և իմաստային:

Հարկ է նշել, սակայն, որ յուրացման վերոհիշյալ փուլերը չի կարելի բացարձակացնել՝ դիտարկելով դրանք որպես փոխառու լեզվում լեզվական երևույթների զարգացման տարանջատված ու ինքնուրույն, միմյանց հաջորդող էտապներ:

Բանն այն է, որ հաճախ բառափոխառությունների հնչյունագրային յուրացումը կարող է ուղեկցվել քերականական զարգացումներով և կամ վերջիններիս ընթացքում ստեղծվեն բառային նոր իմաստներ:

Այս կապակցությամբ հետաքրքրական է նշել, որ ուսումնասիրելով անգլերենի ձևաբանական յուրահատկությունների զարգացման ընթացքը՝ շատ լեզվաբաններ կարևորում են դրանց քննությունը հնչյունական փոփոխությունների համատեքստում, քանի որ ուղղակի կապ են տեսնում լեզվի ձևաբանական պարզեցման և առանձին հնչյունական փոփոխությունների ու, մասնավորապես, վերջնավանկերում անշեշտ ծայրավորների կորստի միջև, որն էլ աստիճանաբար բերում է վերլուծական ձևերի առաջացման¹:

XVII-XVIII դարերի բառափոխառությունների յուրացման ձևաբանական առանձնահատկությունների տեսանկյունից ուշադրության է արժանի Մ.Գուլամանի մոտեցումը, ըստ որի անգլերենի քերականական համակարգում վերլուծական կառույցների արագընթաց ձևավորումը բացատրվում է արտաքին գործոնների ազդեցությամբ, մասնավորապես անգլերենի՝ ֆրանսերենի ու դանիերենի հետ ունեցած սերտ կապերով²:

Այս կարծիքի հավաստիությունը հաստատվում է նաև այլ լեզվաբանների հետազոտական արդյունքներով, որոնք բացահայտում են օտար տարրերի ներթափանցմամբ այս կամ այն կերպ պայմանավորված փոխառու լեզվի քերականական զարգացումների բազմաթիվ դեպքեր: Սուտք գործելով փոխառու լեզու՝ օտար լեզվական միավորներն անուղակիորեն իրենց հետ բերում են փոխառու լեզվի քերականական տարրեր: Այս առումով Լ.Դրժուան հատկապես կարևորում է միևնույն հնչյունի, շեշտի կամ ածանցի առանձնացումը փոխառու լեզվում և ապա դրանց լայն կիրառությունը վերջինիս շրջանակներում³:

Այս կապակցությամբ որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Ջ.Նոելսի դիտարկումներն անգլերենի զարգացման ավելի վաղ շրջանի վերաբերյալ: Համաձայն նրա ուսումնասիրությունների՝ ֆրանսերեն բառերն ու փոխառությունները խորապես ազդել են անգլերենի քերականության զարգացման ընթացքի վրա՝ ուղղակիորեն նպաստելով որոշ երևույթների վերածավալմանը ֆրանսերենի օրինակով: Այսպես, միջին անգլերենում ֆրանսերենի *qui* հարաբերական դերանվան ազդեցության տակ *who* (*hwa*) հարցական դերանունը ընդլայնում է իր քերականական իմաստը և, ըստ էության, դուրս մղելով հին անգլերենի *ƿe* միավորը՝ ստանձնում է նաև հարաբերական դերանվան գործառույթ, որն էլ պահպանվում է մինչև մեր օրերը (օրինակ՝ *the man who lives next door*)⁴:

Ինչպես ցույց է տալիս լեզվական նյութի քննությունը, ներմուծվող լեզվական միավորների փոխառու լեզվի քերականական հարաբերությունները դրսևորելու ունակության գաղափարը կարելի է ընդունել որոշ վերապահումներով, քանի որ ցանկացած լեզվի զարգացում նրա պատմության տարբեր փուլերում կախված է ոչ միայն արտաքին, այլև ներքին գործոններից և դրանց ճնշման տակ ձևավորվող տարբեր օրինաչափություններից: Իհարկե, ակնհայտ է այն իրողությունը, որ անգլերենի քերականական համակարգը ինչ-ինչ ազդե-

ցություններ կրել է ինչպես ֆրանսերենից, այնպես էլ անգլերենի հետ շփման մեջ եղած այլ լեզուներից: Այս առումով, օրինակ, ֆրանսերենի դերը հատկապես կարևորվում է անգլերենի համադրականից վերլուծականի անցնելու ընթացքում: Ու թեև ֆրանսերենն այդ երևույթի ծագման բուն պատճառը չէր, քանի որ դեռևս վաղ շրջանում անգլերենի քերականության մեջ նկատելի էին վերլուծական ձևերի անցնելու միտումներ, այն, ի թիվս այլ արտաքին և ներքին գործոնների, իր որոշակի դերն է խաղացել այդ պրոցեսում:

Ըստ երևույթին, պատահական չպետք է համարել Լ.Բլումֆիլդի կարծիքն այն մասին, որ չի կարելի գերազնահատել լեզվական միավորների ազդեցությունը թողնելու ներուժը, քանի որ փոխատու լեզվի քերականական գծերը կարող են ներդրվել միայն սահմանափակ թվով ավանդական ձևերում և հազիվ թե տարածվեն փոխառու լեզվի մյուս բոլոր միավորների վրա: Լ.Բլումֆիլդն արտահայտում է այն համոզմունքը, որ բառափոխառությունները սովորաբար և ընդհանրապես ենթարկվում են փոխառու լեզվի քերականական համակարգին⁵:

Ջ. Այքլիսոնի պատկերավոր արտահայտությամբ փոխառու լեզվի զարգացման տենդենցները մման են պատուհանների, որոնք որքան էլ ենթարկվելու լինեն անծրևի կաթիլների հարվածներին, այդուհանդերձ չեն կտրտվում և անծրևի կաթիլներն ապակու միջով ներս չեն անցնում: Ջրի կաթիլները կարող են ներթափանցել միայն այն դեպքում, եթե ապակու վրա ի սկզբանե ճեղքեր կան⁶: Ուրիշ խոսքով, ըստ Ջ. Այքլիսոնի, օտար տարրերն անկարող են աղավաղել լեզվի հիմնական կառուցվածքը:

Եվ իրոք, ֆրանսերենից փոխառված գոյականները փոխատու լեզվում զուրկ լինելով ստացական հոլովի քերականական կարգից և վերջինիս իմաստն արտահայտելով նախդիրների օգնությամբ, այնուամենայնիվ, փոխառու լեզվում (մասնավորապես շնչավոր առարկա ցույց տվող գոյականները) ստանում են անգլերենին հատուկ 's հոլովական վերջավորությունը: Այսինքն, չնայած ակնհայտ մեծ քանակին, ֆրանսերենից ներթափանցած գոյականներն ի զորու չեն անգլերենում վերացնելու ստացական հոլովի 's վերջավորությունը, այլ հենց իրենք են ենթարկվում այդ օրինաչափությանը: Հետևաբար միանգամայն օրինաչափ պետք է համարել այն փաստը, որ թեև XVII-XVIII դարերում անգլերեն քերականական համակարգում առկա են բազմաթիվ ընդհանրություններ, հանգուցային քերականական երևույթների առումով դրանք

նկատելիորեն տարբեր են: Ըստ որում այս տարբերությունները հատկապես ակնհայտ են դառնում տարբեր խոսքի մասերի պատկանող ֆրանսերեն բառափոխառությունների ուսումնասիրության ընթացքում:

Համաձայն Լ.Դըռուայի դիտարկումների՝ տարբեր խոսքի մասեր տարբեր աստիճանի ակտիվություն են դրսևորում մի լեզվից մյուսն անցնելիս⁷: Այս առումով հատկապես ակտիվ են գոյականները, որոնք փոխառու լեզու են թափանցում ու յուրացվում երկու ժողովուրդների սերտ հարաբերակցության շնորհիվ ստեղծված պատմա-քաղաքական ու հասարակական զարգացումների պայմաններում՝ փոխառու լեզուն կրող ժողովրդի գիտակցության մեջ ներմուծելով նոր առարկաների ու երևույթների հասկացություններ: Այսպես օրինակ՝ *flageolet*, *trombone* բառերը, որոնք լինելով երաժշտական գործիքների անվանումներ, անգլերեն են փոխառվել այդ գործիքների Անգլիա ներմուծվելուց հետո:

Սովորաբար ավելի դանդաղ է ընթանում ածականների մուտքն ու յուրացումը, որոնք հաճախ փոխառվում են բարդ բառերի, բառակապակցությունների, արտահայտությունների միջոցով՝ կիրառություն գտնելով մեծ գրողների, հրապարակախոսների բարձրաճ խոսքում: Թերևս այդ է՝ պատճառը, որ ֆրանսերենից անգլերեն մուտք գործած մի քանի ածականներ (*beau* (*beaux*) (XVII), *farouche* (XVIII), *gauche* (XVIII), *outré* (XVIII), *petite* (*petit*) (XVIII), *recherche* (XVIII), և այլն) այսօր էլ պահպանել են փոխառու լեզվի համար հատկանշական որոշ գծեր՝ ըստ էության չյուրացվելով և ընկալվելով որպես օտարաբանություններ:

Ինչ վերաբերվում է այլ խոսքի մասերի, մասնավորապես՝ բայերի, մակբայների ու ծայնարկությունների փոխառմանը, ապա հայտնի է, որ դրանց ներթափանցման հնարավորություններն ավելի սահմանափակ են⁸: Մեր մյուսի շրջանակներում հնարավոր է եղել արձանագրել, որ նշված ժամանակահատվածում ֆրանսերենից անգլերեն, այնուամենայնիվ, մուտք գործել են որոշ բայական փոխառություններ: Ըստ երևույթին կարելի է ենթադրել, որ դրանք հիմնականում փոխառվել են ֆրանսախոս հանրության կողմից: Բանն այն է, որ եթե միջին դարերում ֆրանսերենը շուրջ երեք դար շարունակ գերիշխում էր հասարակական-քաղաքական, տնտեսական բոլոր ոլորտներում և ընկալվում էր որպես պետական նշանակության լեզու, ապա XVII-XVIII դարերում այն սոսկ «մոդայիկ» լեզու էր, որ գործածվում էր կրթված ֆրանսախոս հանրության

կողմից: Պետական լեզվի դերն արդեն ստանձնել էր անգլերենը, որը ձևավորվում էր որպես ազգային գրական լեզու: Փորձեր էին արվում հաստատելու գրավոր և բանավոր խոսքի կայուն նորմեր: Այդ իսկ պատճառով, ի տարբերություն միջին դարերի, երբ ֆրանսերենի բայական փոխառությունները հիմնականում արդեն ամրակայվել էին անգլերենում՝ անգլոսաքսոնական շատ միավորների փոխարեն⁹, ուսումնասիրվող շրջանում մուտք գործած ֆրանսերեն բայերն ի գորու չեղան դուրս մղելու անգլերենում արդեն «որդեգրված» և լիովին յուրացված փոխառությունները հին ֆրանսերենից, լատիներենից և այլ լեզուներից, այլ պարզապես հոմանշային հարաբերության մեջ մտան նրանց հետ:

Այսպես, օրինակ՝ XVIII դարում ֆրանսերենից փոխառված demoralize (ֆր. *démoraliser*) բայն անգլերենում հոմանշային հարաբերության մեջ է մտնում լատիներենից XIV դարում corrupt և ֆրանսերենից տարբեր դարաշրջաններում ներթափանցած, փոխառու լեզվում յուրացված pervert (XIV), bastardize (XVI), debauch (XVII), brutalize (XVIII) բայերի հետ: Սեկ այլ օրինակ է XVII դարի inspect բառափոխառությունը, որը հոմանշային հարաբերության մեջ է մտնում XIV դարի view, XV դարի survey և XVII դարի scrutinize ֆրանսերենից փոխառված բայերի հետ:

Ֆրանսերեն բառափոխառությունների քերականական յուրացման ընթացքը սերտորեն կապվում է երկու լեզուների (անգլերեն և ֆրանսերեն) քերականական կարգերի նմանությունների և տարբերությունների հետ:

XVII-XVIII դարերի բառափոխառությունների քննությունը հաստատում է ֆրանսերեն գոյականական միավորների ներթափանցման ու յուրացման ինտենսիվությունը անգլերենում, ընդ որում, որքան բառն ավելի ընդհանուր կիրառություն է ձեռք բերում, այնքան ավելի մեծանում է լիակատար յուրացման հնարավորությունը: Յուրացման ոլորտությունը խոչընդոտվում է փոխառու լեզվում փոխատու լեզվի այս կամ այն քերականական կարգի բացակայությամբ: Նմանօրինակ ակնհայտ փաստ է ֆրանսերենի և անգլերենի գոյականի սեռի կարգում առկա տարբերությունը: Հայտնի է, որ հին անգլերենում գոյականներն ունեին երեք սեռ՝ արական, իգական և չեզոք: Սակայն սեռի տարբերակումը միշտ չէ, որ արտահայտվում էր հատուկ վերջավորություններով: Այսպես, հին անգլերեն *fisc* (ժամ. *fisch*) բառը արական սեռի գոյական էր, մինչդեռ *scip* (ժամ. *ship*) -ը՝ չեզոք սեռի, իսկ հին անգլերեն

խօս (ժամ. love), խոս (ժամ. tale) գոյականները պատկանում էին իգական սեռի: Ուրիշ խոսքով, չնայած տարբերակող վերջավորությունների սահմանափակ դրսևորմանը՝ հին անգլերենում սեռը քերականական կարգ էր. տարբեր սեռի գոյականներ ենթարկվում էին տարբեր հոլովների, օրինակ՝ *‘ա’* հոլովման ենթարկվում էին միայն արական և չեզոք սեռի գոյականները, մինչդեռ *‘օ’* հոլովման՝ միայն իգականը:

Սակայն անգլերենում XIII-XIV դարերում արդեն աստիճանաբար, իսկ XVII-XVIII դարերում լիովին անհետանում են սեռային քերականական տարբերակումները և այն վեր է ածվում իմաստային կարգի. շնչավոր առարկաները բաժանվում են իգական և արական սեռերի, իսկ անշունչ առարկաները համարվում են չեզոք սեռի գոյականներ¹⁰: Փաստորեն, սեռային հենց այս բաժանումն էլ առկա է ժամանակակից անգլերենում:

Ֆրանսերենում ունենալով սեռային որոշակի վերջավորություններ (արական սեռում՝ *-er, -ier, -ien, -on, -f, -eur, -teur*, իգական սեռում՝ *-ère, -ière, -ve, -euse, -trice, -e* և այլն)՝ ներմուծվող բառերի ու հասկացությունների անվանումները, բնականաբար, փոխառվում են համապատասխան քերականական սեռը մատնանշող վերջավորություններով: Սակայն անգլերենում այդ կարգի բացակայության պայմաններում սեռային վերջավորությունները չեն ընկալվում որպես այդպիսիք:

Թերևս բացառություն են *-esse* (հետագայում անգլերենում *-ess*) վերջածանցով բառափոխառությունները, որոնցում *-ess*-ը այսօր էլ մատնանշում է իգական սեռի գոյականներ: Երևույթը բացատրվում է դեռևս միջին անգլերենում *-esse* վերջածանցն ունեցող բառերի մեծաթիվ փոխառությամբ և դրանց լայն կիրառությամբ: Օրինակ՝ XVI դարում իսպաներենից փոխառված *negro* բառն անգլերենում կիրառվում էր թե՛ կին և թե՛ տղամարդ սևամորթի համար: XVIII դարում ֆրանսերենից փոխառվում է նաև իգական սեռի *negress* (ֆր. *négresse*) գոյականը: *-esse* վերջածանցն այնքան գործում էր անգլերենում, որ *-trice*-ով վերջացող իգական սեռի բառերը *-esse*-ով կազմվող բառերի համաբանությամբ ստանում են *-tress* վերջածանցը (ըստ էության *-trice*-ը փոխելով *-tress*-ի): Այսպես օրինակ՝ դեռևս XIV դարում անգլերեն էր ներմուծվել *actor* (հին ֆր. *acteur*) բառը, որի քերականական իմաստը կոնկրետանում է XVIII դարում՝ բացառապես մատնանշելով արական սեռի պատկանող անձ: Բանն այն է, որ նույն ժամանակահատվածում

Ֆրանսերենից փոխառվում է նաև իգական սեռի actrice բառածևը, որն անգլերենում փոխվում է actress-ի:

Անգլերենի հետազոտվող ժամանակաշրջանի բառաֆոնդի քննությունը ցույց է տալիս, որ իգականի -ess վերջածանցը միանգամայն արդյունավետ գործածություն է ունեցել այդ շրջանում: Սակայն հետագա զարգացումները բերել են այն իրավիճակին, որ (թեև ժամանակակից բառարաններում շարունակվում են պահպանվել արական-իգական տարբերակումները -ess վերջածանցի օգնությամբ՝ poetess, actress և այլն) նշված վերջածանցն ունեցող շատ բառեր դուրս են մղվել իրական գործածությունից՝ իրենց տեղը զիջելով նույն հիմքով կազմված ածանցազուրկ բառահավորներին (poet, author և այլն):

Այս կապակցությամբ հետաքրքրական է նշել, որ կորցնելով քերականական սեռը՝ բնական սեռի կարգը համապատասխանաբար լեզվում արտահայտելու համար բացի փոխառյալ միավորներից կիրառվում էին նաև բազմաթիվ այլ միջոցներ (մասնավորապես առանձին բառեր և բառակապակցություններ), ինչպես օրինակ, դեռևս հին անգլերենում գործող bachelor - spinster, brother - sister, man - woman և այլն, ավելի ուշ մուտք գործած boy friend - girl friend, man student - woman student, nurse - male nurse և այլն:

Ֆրանսերենից բառերը հիմնականում փոխառվում են միայն կամ արական, կամ իգական սեռի վերջավորությամբ: XVII-XVIII դարերում փոխառված ֆրանսերեն գոյականների գերակշռող մասը (մոտավորապես 70%-ը) անգլերեն են ներթափանցել արական սեռին հատուկ բառածևերով, օրինակ՝ acoustic (XVII), agitator (XVIII), balsemain (XVIII), basset (XxVII), cabriolet (XVIII), calendar (XVII), colporteur (XVIII), confinement (XVII), cravat (XVII), electric (XVII), entrements (XVIII), goitre (XVII), macaque (XVII), minaret (XVII) և շատ ու շատ ուրիշներ:

Գոյականի սեռի, որպես քերականական կարգի, վերացման փաստով է բացատրվում հին անգլերենի հոլովական համակարգի փլուզումը: Սեռի քերականական կարգի վերացման հետ խառնաշփոթ է առաջանում անգլերենի հոլովական համակարգում, որի արդյունքում XIV-XV դարերում լեզվում առկա չորս հոլովներից մնում են միայն երկուսը՝ ընդհանուրը, որն ըստ էության կատարում է ոչ միայն ուղղական, այլև տրական և հայցական հոլովների գործառույթը, և սեռականը (ժամանակակից անգլերենում՝ ստացականը): Գոյա-

կանը ընդհանուր հոլովում կիրառվում է ուղիղ ձևով, իսկ ստացական հոլովում շնչավոր առարկաներ ցույց տվող գոյականները XVII-XVIII դարերում ստանում են -es վերջավորությունը (որն էլ XVII դարի վերջին փոխվում է ապաթարց s-ի կամ միայն ապաթարցի, երբ բառը վերջանում է s-ով), մինչդեռ անշունչ առարկաներ ցույց տվող գոյականների ստացական հոլովը հիմնականում դրսևորվում է վերլուծական ձևով՝ of նախդրի օգնությամբ¹¹: Ի տարբերություն անգլերենի, հին ֆրանսերենը հնդեվրոպական լեզվաընտանիքից ժառանգել էր միայն երկու հոլով՝ թեք և ուղղական: Մեր կողմից ուսումնասիրվող ժամանակաշրջանում ֆրանսերենն արդեն կորցրել էր միակ թեք հոլովի հոլովական վերջավորությունները, և մնացած բոլոր հոլովական հարաբերություններն արտահայտվում էին նախդիրների օգնությամբ:

Այս իրողությունը նպաստող հանգամանք է անգլերենում փոխառյալ գոյականների յուրացման համար. հոլովական իմաստ արտահայտող այս կամ այն ֆրանսերեն նախդիրն առանց դժվարության փոխարինվում է անգլերենով, օրինակ՝

Ֆր. vers hôtel-անգլ. to the hotel (XVIII)

Ֆր. de l' hôtel-անգլ. from the hotel

Ֆր. d' hôtel - անգլ. of the hotel

Թերևս այդ է պատճառը, որ ֆրանսերեն բառափոխառությունների ճնշող մեծամասնությունը ստացական հոլովի ձևը կազմում է of նախդրի օգնությամբ: Եվ միայն հետագայում ավելի լայն կիրառություն գտնելով՝ դրանց մի զգալի մասը, ենթարկվելով հնչյունազդային և իմաստային յուրացման, փոխում են նաև ստացական հոլովի կազմությունը՝ անգլերենի քերականական կանոններին համապատասխան: Այս են վկայում ժամանակի գեղարվեստական խոսքում տեղ գտած ֆրանսերեն բառափոխառությունների կիրառության դեպքերը (Of had been some high gallant's little worth. - Dryden, The Rival Ladies, V, III, p. 219), որն էլ ուսումնասիրության տվյալ փուլում դուրս է մեր քննության շրջանակներից:

Ինչ վերաբերում է գոյականների թվի կարգին, ապա հետազոտվող շրջանում ֆրանսերենն ու անգլերենը համընկնում են: Երկու լեզուներում էլ գոյականին բնորոշ է եզակի և հոգնակի թվերի առկայությունը, ընդ որում XVII-XVIII դարերում անգլերենում գոյականների գերակշիռ մասը հոգնակի թվում ստանում է -s կամ -es վերջավորությունը:

Քննությունը ցույց է տալիս, որ ֆրանսերեն բառափոխառությունների մոտավորապես կեսից ավելին անգլերենում հոգնակի թվում ստանում է -s վերջավորությունը, օրինակ՝ *bart* (XVII), *bomb* (XVII), *cachalot* (XVIII), *calendar* (XVII), *cougar* (XVIII), *fanfare* (XVII), *oculist* (XVII) և այլն: Եզակի թվում -s, -x, -z-ով վերջացող գոյականները, որոնք ֆրանսերենում հոգնակի թվում հիմնականում մնում են անփոփոխ, փոխառու լեզվում ձեռք են բերում -es վերջավորությունը՝ համաձայն անգլերենի գոյականի հոգնակի թվի կազմության կանոնի: Այսպես՝ *rebus* XVII դարի փոխառությունը անգլերենում ստանում է -es վերջավորությունը, մինչդեռ ֆրանսերենում հոգնակի թվում բառածևը մնում է նույնը՝ փոխելով միայն հոդը:

Ասվածը, սակայն, ամենևին էլ չի բացառում փոխառված գոյականական միավորների հոգնակի ձևերի մուտքը և հետագայում դրանց կենսունակության պահպանումը փոխառու լեզվում: Այս են վկայում հետազոտվող նյութում առկա բառամիավորները, որոնք և՛ եզակիում, և՛ հոգնակիում պահպանել են փոխառու լեզվին բնորոշ գծեր: Այսպես՝ եզ.թ. *bureau* (XVII)—հոգն. թ. *bureaux*, եզ.թ. *bateau* (XVIII)—հոգն. թ. *bateaux*, եզ.թ. *bijou* (XVII)—հոգն. թ. *bijoux* և այլ բառեր անգլերենում դիտվում են որպես չլուրացված միավորներ՝ օտարաբանություններ:

Մյուս կողմից, քիչ չեն նաև այն դեպքերը, երբ փոխառու լեզվում ֆրանսերեն ձևերին զուգահեռ նշվում են նաև նրանց յուրացված տարբերակները, օրինակ՝ եզ.թ. *flambeau* (XVII)—հոգն. թ. *flambeaus* — *flambeaux*, եզ.թ. *plateau* (XVIII)—հոգն. թ. *plateaus* և *plateaux*, եզ.թ. *portmanteau* (XVII)—հոգն. թ. *portmanteaus* և *portmanteaux* և այլն:

Հետազոտվող նյութի վիճակագրական քննությամբ հաստատվում է, սակայն, որ ֆրանսերենից փոխառված գոյականների շուրջ 95%-ը ժամանակի ընթացքում անգլերենում յուրացվել է թվի քերականական կարգի առումով, և միայն 5%-ում պահպանվել է ֆրանսերենին բնորոշ հոգնակի թվի կազմության սկզբունքը:

Ֆրանսերենից ներթափանցած գոյականների յուրացման առանձնահատկությունների քննությունը չի կարող չըջանցել ածանցավոր գոյականների դիտարկումը: Յուրացված փոխառությունների չըջանակում հնարավոր է եղել բացահայտել զգալի թվով ֆրանսիական ծագում ունեցող ածանցներ, որոնք կայունացել և արգասավոր գործածություն են ձեռք բերել անգլերենում՝ մի

կողմից միջին դարերում ֆրանսերենից անգլերեն անցած ածանցավոր բառափոխառությունների ազդեցության ներքո, մյուս կողմից ածանցների առանձնացման և «ինքնուրույն» յուրացման շնորհիվ: Մեր կողմից ուսումնասիրվող շրջանում ֆրանսերեն բառածևերի միջոցով անգլերեն ներթափանցած և հետագայում բառակազմության մեջ առավել գործածական գոյականակերտ վերջածանցներից են՝ -ade: Սա XVII-XVIII դարերի ամենատարածված վերջածանցն էր, որի միջոցով կազմվում էին cascade, parade, colonade, brigade և այսօրինակ բազմաթիվ այլ գոյականներ:

-age : passage, brigandage

-an (-ian); -on; -en: citizen

-ance; -ence: impertinence, ordonnance

-ant: adoptant, commandant

-aire; -ier; -er: financier, brigadier

-ation: clarification (այս վերջածանցը բեղմնավոր է դառնում XVII դարից սկսած)

-elle: brocatelle, bagatelle

-ette: banquette, toilette

-eur: accoucheur

-ment ա) վերացական իմաստով amusement, assortment բ) կոնկրետ իմաստով՝ compliment

-oire(e): memoir, conservatoire

Անգլերենում առավել հետաքրքիր զարգացում է ունեցել ֆրանսերեն - é/ -ée վերջածանցը: Ֆրանսերենում —é (իզական սեռում éé) վերջածանց ունեցող դերբայը շատ հաճախ կատարում էր ածականի և գոյականի գործառույթ:

XVII դարից ներթափանցելով անգլերեն - é վերջածանց ունեցող ածականական դերբայներն անգլերենում ընկալվում են որպես ածականներ կամ գոյականներ (ըստ գործառական տարբերակման): Ընդ որում, ուսումնասիրվող ժամանակաշրջանում փոխառված - é վերջավորություն ունեցող գոյականների թիվը գերազանցում է ածականներինը: Տարբեր է նաև նրանց յուրացման աստիճանը: Գոյականները, ի տարբերություն ածականների, արագ են յուրացվել անգլերենի կողմից: Դրանցից շատերը - é վերջավորությունը փոխել են -y-ի, օրինակ՝

անգլ. inanity (XVIII), - ֆր. inanité

անգլ. naivety (XVII), - ֆր. naïveté,

բայց սրա կողքին ունենք նաև protégé (XVIII), moiré (XVII) չուրացված ձևերը:

Քննությունը ցույց է տալիս, որ նշված ժամանակաշրջանում փոխառյալ ածանցավոր գոյականների մեծ քանակը նպաստել է ֆրանսիական բառաձևերի պահպանմանը ժամանակակից անգլերենում: Այսպես, օրինակ՝ անգլ. barbette (XVIII), - ֆր. barbette, անգլ. cohesion (XVII) - ֆր. cohésion, անգլ. marionette (XVII) - ֆր. marionette, անգլ. menagerie (XVIII) - ֆր. ménagerie, անգլ. piroquette - ֆր. piroquette: Մյուս կողմից մի շարք գոյականներ, այնուամենայնիվ, փոխել են իրենց բառաձևերը.

անգլ. caliphate (XVIII), - ֆր. califat,

անգլ. drogher (XVIII), - ֆր. drogueur,

անգլ. metric (XVIII), - ֆր. métrique և այլն:

Այսպիսով, XVII-XVIII դարերում անգլերեն ներթափանցած գոյականների քննությունը ցույց է տալիս, որ նրանք հիմնականում ենթարկվել են փոխառու լեզվի ձևաբանական նորմերին, որն էլ նպաստել է նրանց ամրակայմանը անգլերենում և, հետևաբար նրա համալրմանն և զարգացմանը: Ու թեև, ժամանակի ընթացքում դրանց մի մասը, գործառական առումով սպառվելով, դուրս է մղվել փոխառու լեզվից կամ վերածվել պասիվ գործածության հնաոճ բառերի, այդուհանդերձ դրանց որոշակի մասն այսօր էլ անգլերենի հիմնական բառաֆոնդի գործոն միավորներ են:

Ծանոթագրություններ

1. Stiu A.И. Смирницкий, Лекции по истории английского языка /средний и новый период. Москва, Добросвет, 2-ое изд.,1998, О. Jespersen, Language. Its Nature, Development and Origin. London, 1923, L. Murray, English Grammar. Derby, 1839 և այլն:

2. Stiu M.M. Гухман, К вопросу о развитии анализа в индоевропейских языках. В. сб. "Вопросы грамматики" Т-2. Москва, 1940.

3. Stiu L. Deroy, L' Emprunt linguistique. Société d'Édition "Les Belles Lettres". Paris, 1956.

4 Stiu G. Knowles, A Cultural History of the English Language. London, New York, Sydney, Auckland, 1998.

5. L. Բլումֆիլդը բերում է ծագումնաբանորեն ռուսերեն *bolshevik* բառի օրինակը: Այն անգլերենում կիրառվում է թե՛ փոխառու լեզվի քերականական կանոններից՝ '*bolsheviks*' և թե՛ փոխատու լեզվին համապատասխան '*bolshevik*' ձևերով (L.Bloomfield, *Language*, The University of Chicago Press, 1935, էջ 56-60):

6. St'u J. Aitchison, *The Language Web: the Power and Prombel of Words*. Cambridge, University Press 1997.

7. Տե՛ս L. Dero, նույն տեղում:

8. Տե՛ս А.И. Смирницкий, *Лекции по истории английского языка /средний и новый период*. Москва, Добросвет, 2-ое изд., 1998, L. Dero, *L'Emprunt linguistique*. Société d'Édition "Les Belles Lettres". Paris, 1956.

9. Սրա վկայությունն է XVII-XVIII դարերում անգլոսաքսոնական ծագման բայերի անհամեմատ փոքր թիվը անգլերենի բառաֆոնդում (The Oxford Dictionary of English Etymology, Oxford, At the Clarendon Press, 1985):

10. Այս կապակցությամբ հետաքրքրական է նշել, որ ժամանակակից անգլերենում հանդիպում են նաև չմեկնաբանված բացառություններ, օրինակ *ship* բառը, որը հին անգլերենում չեզոք սեռի էր, ժամանակակից անգլերենում դիտվում է որպես իգական սեռի գոյական (*ship* բառի փոխարեն անգլերենում կիրառվում է *she* իգական սեռի դերանունը), մինչդեռ *baby* բառի փոխարեն կիրառվում է *it* չեզոք սեռի դերանունը:

11. Ժամանակակից անգլերենում, սակայն, ստացական հոլովի '*s*' հոլովական ձևն ավելի լայն կիրառություն է ստանում: Այն կիրառվում է ոչ միայն անձ, այլև ժամանակային հարաբերություններ ցույց տվող գոյականների հետ (*a week's absence, this year's elections*), ինչպես նաև գոյականացված մակբայներից մի քանիսի հետ (*today's newspaper, yesterday's news*) և այլն: Ժամանակակից անգլերենում հաճախ ենք հանդիպում նաև '*s*' հոլովական ձևի կիրառությանը իր ցույց տվող բառերի կամ վերացական հասկացությունների շրջանում, օրինակ՝ *a work's popularity, the engine's overhaul life*.